Երեք տարի անց՝ պրեսի

Ա. Հայրապետյան. Բնական խոսքի ընդհանրական ներկայացման մի տարբերակի մասին. Agoulis, Concord, *2022. Ավտորեֆերատ*

Բովանդակություն

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ 2

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ 2

ԱՊԱԳԱՆ 2

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ 3

ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԸ 3

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ 4

ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄ՝ ԼԵԶՈՒ ԵՒ ԽՈՍՔ 6

ԽՈՍՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 9

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ 9

ԽՈՍՔԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԵՒ ԼԵԶՎԻ ՄԱՍԵՐԸ 10

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 12

ՁԵՒԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 12

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ 12

ԻՄԱՍՏՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 13

ՁԵՒՈՒՅԹՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ 15

ՁԵՒԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 15

ՄՈԴԵԼԸ 15

ՆՅՈՒԹԻ ԱՐՏԱՊԱՏԿԵՐՈՒՄԸ՝ ԳՐՔԻ ՖՈՐՄԱՏԸ 17

ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ 18

ՀԵՏԱԳԱ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 19

ՀԱՎԵԼՎԱԾ 20

Ա. ՀԱՎԵԼՅԱԼ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 20

Բ. ԽՈՍԱԿՑԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՊԻՏԱԿՆԵՐԸ 20

ՎԵՐԱՆԱՅՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 21

Հիմնական դրույթները

Ընդհանրական

Այս ինքնագրախոսականը մի փորձ է բացատրելու, թե գիրքն ինչի մասին է եւ ինչպես ես այն կշարադրեի այսօր։

Երեք տարում ձեռք բերած լեզվաբանական, ինչպես նաեւ լեզվաբանության, հումանիտար միջավայրի մասին գիտելիքները ստիպեցին վերանայել շարադրված փաստերը, ավելացնել նորերը՝ նորովի մեկնաբանել գրվածը, լրացնել բացերը, ուղղել անճշտությունները, ճշտել շեշտադրումները։

Վերջին տարի ու կեսում անհամեմատ ավելի շատ ժամանակ կար մտածելու եւ գրվածի, եւ չգրվածի մասին։ Վերկարդալ շտապ-շտապ գրված հատվածները եւ վերագնահատել։

Մանր-մունր վրիպակները, անճշտությունները, անհեթեթությունները կամաց-կամաց ուղղվեցին (եւ շարունակաբար ուղղվում են)։ Շաղկապների բացը լրացվեց Hay2025 *հոդվածով, որն այս գրախոսականում կհամարենք աշխատության մաս. այս քննարկումը (գրքի + հոդված)-ի մասին է։ Եղանակների կարգավորումը դեռ չի շտկվել։*

Գրքում քերականությունը շարադրվել է ավանդական հաջորդականությամբ՝ ձեւաբանություն --> շարահյուսություն, որին հետեւել են նաեւ օգտագործված հայերեն աղբյուրները։ Հանգիստ մտածելու հաճույքից օգտվելով, եկա այն եզրակացության, որ խոսքային կառուցվածքի «վերից վար» (top-down) *լուսաբանումը «վարից վեր»-ից* (bottom-up) *ավելի բնական է։*

Գրքի բովանդակությունը այստեղ «վերից վար» է նկարագրվում՝ աշխարհայացք, իրականություն <--> գիտություն, նշանակություն <--> խոսք, քերականություն։

Ապագան

2029 թ. պլանավորված երկրորդ ուղղված եւ ընդլայնված (սրանից հետո՝ անգլերեն) հրատարակության մեջ, բացի նյութի վերադասավորումից, շտկված կլինեն եղանակների եւ շաղկապների (վերաբերական «շաղկապները» ներառյալ) լուսաբանումը. կհստակեցվի միասնական հարացույցի [էջջ 166-181] կազմը եւ հարացուցային ձեւերի ֆունկցիան եւ նկարագրությունները. կվերացվի ՀՀ հասկացությունը [էջ 206]. ԱԲ սկզբունքների շարադրման շեշտը կդրվի տեխնոլոգիաների, փիլիսոփայական եւ մաթեմատիկական հիմունքների, այլ ոչ թե դրանց մանրամասների վրա. կփոխվի եզրույթների կազմը, սահմանումները, եւ ներկայացման ձեւաչափը, կկրճատվի Ցուցիչը, *ընդհանրական հասկացությունների հեռացումով. կավելացվի խոսքի խոսակցային շերտի վերլուծությանը* (discourse analysis)*։ Շարադրությունը «վերից վար» կլինի՝ այս գրախոսականի նման։*

Երրորդ, 2037 թ. ուղղված եւ ընդլայնված հրատարակությունում կավելացվեն գանձարանի, որպես լեզվական մոդելի մասի եւ քերականորեն ճիշտ կազմված խոսքային կոդի իմաստի (բովանդակության) ճշտման համար շտեմարան։ Սա ավելի շուտ կլինի նոր հատոր՝ հինը, միգուցե, հանգիստ թողնենք։ Բովանդակության ողնաշարը կլինի Ի՞նչ է լեզուն եւ Լեզվական էվոլյուցիա հոդվածների խառնորդը։

2049 թ. չորրորդ հրատարակությունը կունենա հնչյունաբանությանը նվիրված հատված եւ խոսագենի ձեւայնացումը եւ մանրամասն նկարագրությունը։ 2051 թ. լույս կտեսնի գրքի 29 ամյակին նվիրված տոնական երկհատոր հրատարակությունը։ Հասկանալի պատճառներով վերջին երկու հրատարակությունները իմ ԱԲ-ավատարը կկազմի։

Բոլոր հրատարակություններում Ավտորեֆերատի Հետագա ուսումնասիրությունները *հատվածում բերված կետերից թեմաներ կավելացվեն եւ այդ ցանկը կնորացվի։*

Աշխատության նպատակը

Աշխատության հիմնական նպատակն է՝ «Խոսքի բովանդակությունը ներկայացնել հասկացությունների եւ իրերի անվանումների նշաններով (բառաձեւերով) կառուցված բովանդակության ծառով (ԲԾ), որն ունի բազմատեսակ կիրառումներ (applications)*՝ բազմալեզու որոնման շարժիչներ, թարգմանչական համակարգեր, հանրագիտական եւ լեզվաբանական (միալեզվյան, երկլեզվյան, բազմալեզվյան) բառարաններ» [էջ 12]։*

ԲԾ-ի նախագծման վերջնական նպատակն է ստանալ մի կառույց, որում կպարունակվի բավական տեղեկույթ, որպեսզի նրանից հնարավոր լինի ցանկացած լեզվով իմաստը (բովանդակությունը) ճիշտ վերակառուցել։

«ԲԾ-ն ոչ թե վերացական-ընդհանրական (abstract-universal) *է, այլ առանձնահատուկ-հավաքական* (specific-cumulative)*» [էջ 207] մոդել է։*

Խոսքի նկարագրությունը հիմնվում է լեզվի քերականական մոդելի վրա։ Գրքի զգալի զանգվածը նվիրված է արեւելահայենի լիակատար մոդելի մանրամասն նկարագրությանը։

Մի այլ նպատակ կարելի համարել լեզվափիլիսոփայական մտորումների շարադրումը, ավելի լայն գիտության փիլիսոփայության շրջանակներում։ Ի՞նչ է իրականությունը [էջջ 16-20, 23-34, 190-199], ի՞նչ է գիտությունը[էջջ 192, 337, 351, 361-362], ի՞նչ է մտածողությունը [էջջ 16-20, 190-199], ի՞նչ է քերականությունը[էջջ 31-34], ի՞նչ է լեզուն եւ խոսքը [էջջ 21-22, 28-32] եւ այս ամենի թվացյալ պատճառահետեւական կապը։

Աշխարհայացքը

Հեղինակի աշխարհընկալումը ձեւավորվել է ժամանակակից գիտության նվաճումների եւ դե Կարտեսի (1596-1650), Լայբնիցի (1646-1716), Բերկլիի (1685-1753), Մա-

խի (1838-1916), Ֆրեգեի (1848-1925), Բերգսոնի (1859-1941), Ռասելի (1872-1970), Պոպերի (1902-1994) գաղափարների օգնությամբ դրանց մեկնաբանումների հիման վրա։

Իրականության մասին կարելի խոսել միայն մարդկային ուղեղում ձեւավորված պատկերների միջոցով։ «Իրականության մեր մտավոր պատկերը միակն է, քանի որ դեռ չկա (եւ դժվար է պատկերացնել, տրամաբանել, որ երբեւիցե կլինի) իրականության մեկ այլ, մեր մտքից տարբերվող հաղորդիչով ստացված պատկեր» [էջ 17]։

Պատկերներում մենք առանձնացնում ենք առարկաներ (վիճակներ), դրանց հարաբերությունները եւ ձեւափոխությունները, որոնք «գրանցում» ենք մեր մտքում ձեւավորված իմացական ցանցում (ԻՑ) [էջջ՝ էջեր 190-192], եւ ուսումնասիրում ենք նրանց գոյաբանական, տարածական, ժամանակային, եւ տրամաբանական (պատճառահետեւական) հարաբերությունները [էջջ 16-28]։

Առարկաների հարաբերությունների մասին մարդիկ պատմություններ են հորինում եւ միմիանց պատմում։ Այդ պատմությունները դասակարգվում են որպես առասպելներ (հեքիաթներ), անհեթեթություններ, ենթադրություններ, փաստեր, ևն։ Այն պատմությունները, որոնք հերքելի են կոչվում են գիտական տեսություններ [էջ 18]։

Գիտություն

Այսպիսով մեր գիտելիքները՝ մասնավորապես գիտությունը, ոչ այլ ինչ է, եթե ոչ մեր զգայարաններից ստացված տեղեկույթի (տվյալների) օրինաչափությունների հայտնաբերում եւ բացատրում։ «Բոլոր ֆիզիկական գաղափարները եւ սկզբունքները հակիրճ ցուցումներ են, որոնք հաճախ ընդգրկում են ենթացուցումներ, պատրաստ մարդկային փորձի տնտեսվար յուրացման համար» [Mac1895::204]*, [էջ 353]։ Չնայած, որ գիտությունը իրականության միակ նկարագրությունը չի, այն ամենալիարժեքն է, ճշգրիտը, եւ օբյեկտիվը՝ ամենագործնականը։ Աշխարհի գիտական նկարագրությունը կատարվում է բնական լեզվով եւ նրանից զտված եւ ընդհանրացված ձեւական լեզուներով՝ տրամաբանությամբ եւ մաթեմատիկայով։*

Ցանկացած բնագիտական (ոչ ձեւական-մաթեմատիկական) տեսություն՝ լինի այն ամբողջ աշխարհի կամ նրա մի որեւէ մասի, օրինակ՝ լեզվի մասին չի կարող ճիշտ կամ սխալ լինել։ Այն կարող է միայն ոչ հակասական լինել։ Սա գիտական տեսության անհրաժեշտ պայմանն է։ Իսկ բավարարը՝ գոնե մի երեւույթ բացատրելն է։ Մի քանի երեւույթ բացատրող տեսությունները ոչ միայն լավն են, այլ գերազանց։

«Ճիշտ» տեսությունն այն է, որը դեռ չի փոխարինվել ավելի «ճիշտ», ավելի լավ («թանձր») տեսությունով [Deu1997::30] *(օրինակներ՝ երկրակենտրոն համակարգը արեւակենտրոնով, Լամարկի ժառանգման տեսությունը Դարվինյանով, Նյութոնի մեխանիկան Այնշտայնինով, ևն)։*

Դիտարկում - Գիտափիլիսոփայական «քաղաքական» գործիչները, կամա թե ակամա, զանգվածային մտավոր ռեսուրսներ են զբաղեցնում «մոտեցումների» եւ տեսությունների ճիշտը եւ սխալը զատելու, «ճշմարտությունը» գտնելու համար: Նրանք երկու չհիմնավորված սկզբունք են առաջադրում՝ ա)

իրականությունը արտաքին (Աստծո տեսակետ) նկարագրություն ունի եւ բ) մենք (մարդիկ՝ իրականության մի մասը) այդ նկարագրությունը կարող ենք հայտնաբերել՝ կառուցել, արտածել, ևն: Այս երկու դրույթներից ելնելով գիտությունը դիրքավորվում է որպես արշավ դեպի ճշմարտության գագաթ, դեպի «համընդհանուր տեսություն» (TOE): Այս ճամփին «հայտնաբերված» տեսությունները դասակարգվում՝ իդեալիստական եւ մատերիալիստական, մասնատական (reductionist) եւ միակտորային (holistic), իրականական եւ անվանական, կառուցվածքային եւ ֆունկցիոնալիստական, դետերմինիստական եւ վիճակագրական, ևն: Զնվազեցնելով դասակարգման օգտակարությունը, մենք, այնուամենայնիվ, կփորձենք ինտելեկտուալ ռեսուրսները այդ ունայն հրդեհից փրկել եւ թիրախային օգտագործումով գրքում նկարագրված լեզվաբանական տեսությանը քննել անհակասության եւ գործնականության տեսանկյունից:

Ամփոփելով ներածական փիլիսոփայական դրույթները արձանագրենք [Փաշինյան, ելույթներ] հետեւյալը՝ մենք կարող ենք ա) պնդել միայն մեր (անձի, անհատի) գոյության փաստը (դե Կարտես) եւ, մտավոր պարզագույն շարան կազմելով, մյուս անձերի գոյության փաստը. բ) իրականության մասին տեղեկություններ հավաքել, չափումներ կատարել միայն մեր (մարդ անհատների) զգայարաններով ստացած փաստերից, տվյալներից (Բերկլի, Մախ). գ) այդ չափումների հիման վրա մեր մտքում ստեղծվում են սուբյեկտիվ պատկերներ իրականության մասին [էջջ 17-18, 190-193]. դ) պատկերները օբյեկտիվանում են անհատների շփման ընթացքում՝ դրանք նկարագրվում, համեմատվում, ճշտվում են. ե) պատկերները վերլուծվում, միակտորվում, դասակարգվում, եւ բացատրվում են. այդ ամենի ստուգելի/հերքելի մասի արձանագրումը գիտությունն է զ) այն կատարվում է գծագրային կամ խոսքային նշանների միջոցներով. 1. գծագրային նշանները վերացարկվում են իրականության տեսային պատկերներից եւ, հիմնականում, նմանակում են սույնություններ՝ կոնկրետ են, իսկ 2. խոսքայինները, հիմնականում, չեն նմանակում որեւէ իրական պատկեր. դրանք մտավոր պատկերների որպիսությունն են նշանակում՝ կամայական, պատահական են [էջ 331], բայց համայնքի կողմից ճանաչված. է) ըստ մասշտաբի եւ տեսակի դասակարգված երեւույթների հակիրճ եւ հետեւողական (տրամաբանական, ոչ հակասական) արձանագրումները, որոնք դեռ չեն հերքվել, կազմում են «ճիշտ» գիտական տեսություններ (մանրամասները՝ [Deu1997, Deu2011]*)։*

Իրականության այսպիսի նկարագրությունը սուբյեկտիվ է, քանի որ դա մի կենսաբանական տեսակի պատկերացումն է իրականության մասին։ Սակայն այն նաեւ օբյեկտիվ է, քանի որ միակն է, որ մատչելի է մեր կենսաբանական տեսակին, եւ համաձայնեցված է նրա անհատների, սուբյեկտների հետ։ Օրինակ, եթե ես ասեմ, որ այս նարինջի ծառը ունի կանաչ տերեւներ եւ նարինջագույն պտուղներ մարդկության ռացիոնալ, դատող, գերակշռող մեծամասնությունը կհամաձայնի իմ «գիտական տեսության» հետ, չնայած ոչ ոք հնարավորություն չունի պարզելու կամ զգալու «իմ» կանաչը։

Պատկերները նկարագրելիս մենք միակտորում կամ վերլուծում ենք։ Յանկացած պատկեր է՛ւ ամբողջություն է, է՛ւ մաս։ Գիտական, ռացիոնալ միակտորումը եւ վերլուծումը կատարվում է հետեւյալ սկզբունքներից ելնելով՝

1. «Իրական (մեր զգայարաններից առնվազն մեկին ազդող) այնպիսի առարկայի առկայությունը, որը չափելի ծավալ է զբաղեցնում, եւ որի ազդեցությունն ու չափերը կայուն (անփոփոխ) են որոշակի (զգալի) ժամանակահատվածում.
1. Առարկային բնորոշ է համեմատաբար պարզ ձեւակերպվող հատկությունը կամ գործառույթը (function), այսինքն՝ հատկանիշը.
2. Նույն հատկությունն ունեցող մեկից ավելի առարկաների գոյությունը.
3. Հակադրականությունը՝ նույն հատկությունը չունեցող առարկաների գոյությունը: Այսպիսով, հատկությունը միաժամանակ ե՛ւ միավորում (նույնացնում), ե՛ւ զատում (տարբերակում) է: Նույն հատկությունն ունեցող օբյեկտները միավորվում են որպես հասկացություն եւ տարբերվում են մյուս հասկացություններից.
4. Նոր հասկացության ներմուծումը պետք է իրականության մեր ըմբռնումը (կաղապարը, տեսությունը) պարզեցնի կամ ընդլայնի: Այսինքն՝ քիչ քանակությամբ էությունների (հասկացությունների) նկարագրի եւ բացատրի ավելի մեծ քանակով երեւույթներ:

Վերջին կետը բխում է նվազագույն ճիգի (մտածողության տնտեսում, Օքքամի ածելի) սկզբունքից, որը բնական եւ գիտական կառույցների հիմնաքարերից է» [էջջ 19-20]:

Ցանկացած համակարգի վարվելակերպը, ընդհանուր առմամբ, բնորոշվում է ե՛ւ կառուցվածքով, ե՛ւ ֆունկցիայով՝ այսինքն այդ կառուցվածքի միջավայրի հետ փոխազդեցությամբ: Մենք իրականության պատկերները բաղադրում ենք այնպիսի տարածաժամանակային հատվածների, որոնց կառուցվածքը առանձին մասերի ֆունկցիաների ոչ թե պարզ մաթեմատիկական գումարն է, այլ ավելի քիչ քանակով, ավելի պարզ ֆունկցիաների պատճառ (մտածողության տնտեսում): Այդպիսի կառուցվածքները կամ համակարգերը սովորաբար հասկացություն են դառնում, անվանում ստանում: Այն համակարգերը, որոնց կառուցվածքը հայտնի չէ կամ կարեվոր չէ ատոմ են անվանվում եւ միայն ֆունկցիաներով են նկարագրվում:

Գիտական նկարագրությունը, տեսությունը պետք է ընկալել որպես իրականության մասին մարդկային մտավոր պատկերների նկարագրություն, որը գոյություն ունի միայն մարդկային մտքում (կամ այդ մտքի արտապատկերումներում՝ գծագրերում, հոդվածներում, գրքերում, YouTube վիդեոներում, ևն):

Դիտարկում - Եթե այնուամենայնիվ ուզենանք գրքին փիլիսոփայական կամ մետաֆիզիկական «պիտակ» տալ, ապա երեւի այն ինստրումենտալիստական աշխատություն է, քանի որ ռեալիստ-նոմենալիստական անվանումը գերիշխող տեսանկյունից օքսիմորոն է:

Պատկերների հաղորդում՝ լեզու եւ խոսք

Լեզուն մի գործիք է որը մարդկանց հնարավորություն է տալիս իրականության մասին պատմվածքների՝ գիտական, թե առասպելական, իրար հաղորդել: Հաղորդումները՝ խոսքը, նշաններից կազմված ծառատիպ կոդ է, որը կառուցվում է քերականական օրենքներով: Այդ ծառատիպ կառույցները կապակցվում են հետեւողական մի շարանի՝ շաղկապներով (լայն իմաստով) կամ առանց նրանց, որը հասկանալի է մյուսներին: Հասկանալի լինելը նշանակում է, որ նշանների հարակցություններին համայնքը կարող է նշանակություն վերագրել, այսինքն մտավոր մի որեւէ պատկեր կոդավորել,

այդ իմաստը հասկանալով։ Քերականությունը օրենքների այն բազմությունն է, որը հնարավորություն է տալիս խոսքին իմաստ հաղորդել։ Դրանից հետո իմաստալի խոսքին կարելի նշանակություն տալ։ Սրանով զբաղվում է սեմանտիկան, որը գրքի շրջանակից դուրս է գտնվում։

Քերականական խոսքը հասկանալի է։

Գիրքը լեզվի եւ խոսքի մասին գիտելիքների՝ քերականության, գիտական նկարագրության մի տարբերակ է։

Խոսքը այնպիսի համակարգ է, որի լիակատար գիտական նկարագրությունը պահանջում է ե՛ւ կառուցվածքի, ե՛ւ ֆունկցիայի նկարագրություն ամենատարբեր մակարդակներով՝ սկսած ձեւույթներից մինչեւ խոսակցություն [էջ 200]։

«Բնական խոսքը զգայարանների հետ միասին տեղեկություն է հաղորդում շրջապատի մասին։ Սրանով այն մասնակցում է ԻՅ-ի կառուցմանը։

Այսպիսով ԻՅ-ի կառուցումը կատարվում է 1) իմացական եւ 2) վկայաբերական գործընթացներով.

1. Զգայարան ⇒ Պատկեր ⇒ ((Գիտակցություն)) ⇒ [[Մտածողություն]] ⇒ Հասկացություն ⇒ ԻՅ.
2. ԻՅ$_{խ}$.Հասկացություն ⇒ ((Լեզու)) ⇒ [[Խոսք]] ⇒ ((Լեզու)) ⇒ Հասկացություն ⇒ ԻՅ» [էջ 224]։

«Հաղորդակցման վերջնական խնդիրն է՝ մի մարդու (խոսողի) ԻՅ-ի որեւէ ենթացանցի իզոմորֆ գրառումը կամ նորացումը մեկ այլ մարդու (լսողի) ԻՅ-ում։ Այս գործընթացում հաջորդաբար կատարվում է խոսողի ա) ԻՅ-ի ենթացանցի՝ ԲԾ-ի վերածում, բ) ԲԾ-ի փոխակերպում ՆԾ-ի, գ) ՆԾ-ի գծայնացում (խոսքի վերածելով), լսողի՝ այդ դ) խոսքի վերլուծում ՆԾ-ի, ե) ՆԾ-ի փոխակերպում ԲԾ-ի, ե՛ւ զ) ԲԾ-ի գրառում լսողի ԻՅ-ում» [էջ 225-226]։

Մարդու մտքում երկու տեսակի վիճակներ են կառուցվում՝ պատկերներ իրականության մասին եւ հուզական (հոգեբանական) վիճակներ։ Առաջինները արտահանվում են բնական խոսքով եւ գրաֆիկայով ([գծա]նկարներով)։ Վերջինները նույնպես կարող են արտահայտվել խոսքով եւ նկարով, սակայն զուտ հաղորդա-տեղեկատվական շերտի հետ մեկտեղ գործածվում է գեղագիտա-զգայականը։ Բայց հուզական-հոգեբանական վիճակները արտահայտվում են նաեւ երաժշտական (տաղային) եւ շարժական (պար) միջոցներով. նաեւ վերոբերյալ ամենի սինթեզով՝ թատրոն, կինո, ևն։

Այստեղ մենք կենտրոնանում ենք լեզվի եւ խոսքի, որպես մտավոր պատկերների մասին տեղեկությունների կոդավորման եւ վերծանման գործիքի, հատկությունների վրա։

[էջջ 20-34]. բնական լեզուն մի գործիք է, որով կոդավորվում է բնական խոսքը, որով մեկի մտքում առաջացած պատկերները հաղորդվում են մեկ ուրիշին՝ մարդիկ միմյանց են հաղորդում մտավոր պատկերները, որպես առարկաներ, վիճակներ, եւ նրանց հարաբերություններ եւ այդ ամենի ձեւափոխություններ։ Լեզուն տրամադրում է նշաններ եւ եղած նշաններից նորեր ստեղծելու միջոցներ ա) առարկաներ եւ վիճակներ (գոյականներ), բ) նրանց որպիսությունը (որոշիչներ՝ ածականներ եւ մակբայեր) նկարագրելու եւ գ) այդ ամենի տեւական փոփոխությունները կամ անփոփոխություն-

ները (բայեր) նշանակելու համար։ Գոյականականների կազմում են նաեւ դիրքատեղային նշանները [էջ 24]։ Նրանց մի մեծ զանգված նշանակում է հասկացություններ, այսինքն՝ որպիսություններ [էջ 355], իսկ մի այլ զանգված՝ սույնություններ [էջ 358]։ Սույնությունները հաճախ նշանակվում են հասկացությունների որոշյալ ձեւերով, որոնք մատնացույց են անում այս, այդ, *կամ* այն *որպիսությունը։ Օրինակ՝* այդ գայլը, այս մուկը, այն մարդը *կամ ուղղակի* գայլը, մուկը, մարդը՝ *որոնք հղում են նախկինում արտաբերված համատեքստին։ Լեզուն նշաններ է հատկացնում խոսակցության մասնակիցներին։ Նշանակվում են՝ խոսողը (խոսողները), լսողը (լսողները), խոսակցային գործընթացին չմասնակցողները։ Առանձնացվում են նաեւ խոսողի, լսողի, եւ ոչ մասնակից անձանց տիրույթում (լայն առումով՝ մոտակայքում եւ տիրապետության տակ) գտնվող առարկաները (դերանուններ)։ Մտքերի ընթացքը, նրանց հաջորդականությունը եւ ուղղվածությունը ապահովվում է շաղկապներով։ Կան նշաններ, որոնք ոչ թե նշանակում են, այլ նմանակում շրջապատի ձայները։*

Խոսքն ունի իմաստ եւ նշանակություն[1]։ «19-րդ դարի վերջերի մաթեմատիկոս-փիլիսոփա Գոտլոբ Ֆրեգեն տվեց նշանակություն բառի այս երկու հաճախ շփոթություն առաջացնող երանգների հակիրճ տարբերակումը։ Նա տարբերակեց բովանդակություն (Ա.Հ. - բնագրում՝ sense*) եւ նշանակություն (Ա.Հ. - բնագրում՝* reference*) եզրույթները։ Բովանդակությունն այն գաղափարն է, որ մեկն իր մտքում համապատասխանեցնում է մասնավոր բառին կամ բառակապակցությանը։ Սա տարբերվում է նույն բառի կամ բառակապակցության նշանակությունից, որը եզրույթին եւ նրա բովանդակությանը համապատասխանող մի բան է աշխարհում»* [Dea1998::61] *[էջ 29]։*

Այսինքն, խոսքը իմաստ է արտահայտում, որին կարելի է համապատասխանեցնել կամ որով կարելի բացատրել աշխարհում տեղի ունեցող երեւույթներ։ Այն երեք շերտ ունի կամ երեք բան է կապում՝ արտահայտություն (կոդ), իմաստ (հասկացություն), եւ նշանակություն (պատկեր)։

«[Ն]ախադասության մեջ խոսքը առնվազն պետք է լինի վիճակի (առարկայի) եւ վիճակին հասնելու կամ վիճակում լինելու մասին։ Մեկի կամ մյուսի բացակայության դեպքում նախադասությունը ավարտուն չի լինի։

---

[1] Հաջորդող մեջբերման մեջ եւ գրքում օգտագործվում են «բովանդակություն» եւ «նշանակություն» եզրույթները, միգուցե այն պատճառով, որ հայերեն լեզվաբանական գրականության մեջ Սոսյուրի signifiant/signifié *ընդունված է բովանդակության եւ արտահայտության պլաններ դիտարկել։ Սակայն դա միայն բացատրում է, թե ինչու է այդ անհաջող եզրաբանությունը ընդունվել։ Սրանից հետո կօգտագործենք «իմաստ» եւ «նշանակություն», որ ավելի ճիշտ է թվում եւ մոտիկ է եզրույթների ծագման բնագրում գործածմանը։ Գրքում այս եզրույթների գործածումը հետեւողական չի։*

Ավարտուն նախադասության բովանդակությունը հասկանալի է։ Այն հաղորդում է, թե ի՞նչը (ո՞վ) ի՞նչ է անում (լինում)։

Ավարտականությունը կարելի է սահմանել որպես բառակապակցության հատկություն, որի հավաստիությունը կամ իմաստալիությունը կարելի է որոշել, այսինքն՝ որոշել, թե այն ա) ճիշտ, բ) սուտ, գ) անլուծելի (շրջանակային), դ) իմաստազուրկ է» [էջ 30]։

Խոսքի կառուցվածքը

Շարահյուսություն

Ընդհանուր առմամբ, խոսքը քերականական օրենքներով կառուցված ծառատիպ մասերի՝ գոյականական (ենթակայական, խնդրային), բայական, որոշչային, ևն, (տե՛ս Խոսքի կառուցվածքը *հատվածը), շաղկապներով կամ հարաբերող իմաստույթներով կապակցված (տե՛ս* CONN, Գծագիր Ա*) համադրություն է։*

Բնալեզվական նախադասությունը ընդհանուր դեպքում 4 տեսակի հաղորդում է արտածում [էջ 166]՝

1. *Իրերի, դիրքերի եւ վիճակների ու նրանց հարաբերությունների մասին.*
2. *Իրերի, դիրքերի եւ վիճակների հարաբերությունների փոփոխման մասին.*
3. *Իրերի, դիրքերի եւ վիճակների հարաբերությունների ու նրանց փոփոխման հանդեպ խոսողի վերաբերմունքի մասին.*
4. *Իրերի, դիրքերի եւ վիճակների հարաբերությունների մասին հաղորդման աղբյուրի՝ գիտելիքի ստացման ձեւի եւ այդ տեղեկությունների անսպասելիության մասին։*

Այդ հաղորդումները ձեւավորելու համար անվանական եւ բայական ձեւերը թեքվում են։ Տարբեր լեզուների անվանական [էջջ 288-302] եւ բայական [էջջ 303-313] հարացույցների վերլուծության հիման վրա առաջադրվում են միասնական հոլովման եւ խոնարհման հարացույցները, որոնք ընդհանրական են բոլոր լեզուների համար։

Անվանական թեքման հարացույցը ընդգրկում է բոլոր հոլովները եւ կապական կառույցները, որոնք անհրաժեշտ են բառակապակցություններում անվանական ձեւերի դերակատարումը ապահովելու համար։ Վերլուծական [էջ 359] լեզուներում գործածվում են կապական կառույցներ, իսկ համադրականներում [էջ 346]՝ հոլովաձեւեր։ Առաջիններիի օրինակներ են չինական խմբի լեզուները, իսկ երկրորդ՝ ուգրո-ֆիննական։ Միասնական հոլովման համակարգը ենթադրում է, որ բոլոր լեզուները ունեն նույն «հոլովները», որոնցից մի մասը վերլուծական, իսկ մյուսը՝ համադրական են։ Նման սկզբունքով է ձեւավորվում համընդհանուր խոնարհման համակարգը։ Այն պարունակում է բոլոր լեզուներին հատուկ ժամանակները, կերպերը, եղանակները, ևն։ Հայերենի համադրական [էջջ 170-175, 283] եւ վերլուծական [էջջ 175-178, 295-301] հոլովների որոշվում են բառե-

րի հավաքածուների մեթոդի [էջ 169] նմանակի՝ խոսքի մասերի բնութագրերի [էջ 164-165] օգնությամբ։

[Պարզ] նախադասությունը դիմավոր բայական բառակապակցություն է։ Սա խոսքի հիմնական միավորն է։

Մյուս միավորներն են՝ ա) դիմողական, բ) անվանական, գ) պատասխանական, դ) հարաբերական (շաղկապներ) կառույցները, ինչպես նաեւ ե) բայական, գոյականական, եւ որոշչային բառակապակցությունները [էջ 142]։ Բառակապակցությունների կառուցվածքը եւ նախադասության անդամների հատկությունները քննելուց հետո [էջջ 143-165], տրվում է նախադասության ընդհանուր կառուցվածքը [էջ 165]։

Բայական բնութագրերի ամփոփ բազմությունը [էջջ 284-288] բնորոշում է լեզվի բոլոր պարզ նախադասությունների կառուցվածքը։

Խոսքի միավորները եւ լեզվի մասերը

Այստեղ կխոսենք խոսքի միավորների [էջ 141] (որոնք պետք է անվանել խոսքի մասեր) եւ լեզվի մասերը (ավանդական՝ խոսքի մասերի. տես ստորեւ մեջբերումներում)։

«Այն հանգամանքը, որ, - չնայած բազմաթիվ քննադատություններին ու դիտողություններին, ժխտման ու փոխարինման փորձերին, դասակարգումներին ու վերադասակարգումներին, - խոսքի մասերի հասկացությունը շարունակում է մնալ ժամանակակից քերականության կենտրոնական հասկացություններից մեկը, խոսում է նրա գոյության օբյեկտիվ հիմքերի մասին» [Ջահ1974։։125]։

«Խոսքի մասերի՝ բառերի որոշ խմբեր լինելու դրույթը պետք է հասկանալ պայմանականորեն։ Եթե մի կողմ թողնենք այն կարծիքը, որ իսկական բառը քերականորեն ձևավորված (լինի այն համադրական, թե վերլուծական բաղադրություն) բառն է, և որ, հետևաբար, խոսքի մասերի դասակարգումը պետք է լինի շարահյուսական նվազագույն միավորների դասակարգում (Է. Աթայան), ապա հարկավոր է նկատի առնել, որ խոսքի մասեր դիտվող շատ միավորներ ոչ թե բառեր են, այլ բառախմբեր (հմմտ. բայաձևեր՝ գրել տված է լինում, *եղանակական բառեր՝* կարծես թե, *շաղկապներ՝* ոչ միայն - այլև *և այլն)։ Այսպիսով, բառային միավորների հասկացությունը պետք է տարբերել բառերի հասկացությունից։ Խոսքի մասերը ոչ թե բառերի խմբեր են, այլ բառային միավորների խմբեր» [Ջահ1974։։133]։*

Իմաստույթների դասակարգումը սկսենք խոսքում նրանց դերերի (պաշտոնների) վերլուծությունից։ Բառակապակցությունները, կամ ավելի ընդհանուր՝ խոսքի միավորները, շարահյուսական կանոններով հարադրված իմաստույթների հաջորդականություններ են։ Խոսքը բաղկացած է հետեւյալ մասերից (կազմված է [Hay2025] *հիման վրա)՝*

1. *Բայական բառակապակցություն (*VP*), որը հայտնի է նաեւ որպես նախադասություն*
    a. *Պատմողական նախադասություն, նկարագրություն - «Երվանդի ոտքերը ակամա թուլանում էին, ծնկները ծալվում* (DVP), *երբ Ջուլիետը մոտակայքում էր գտնվում* (DVP)»

b. *Դատողություն (*PVP*)* – «7-ը պարզ թիվ է»
c. *Հարցական/զարմացական բառակապակցություն* (IVP, MVP) – *«Ո՞վ գիտի, թե* որտե՞ղ է ճիմա Կարմեն էլեկտրան»:
d. *Հրամայական բառակապակցություն* (IMPP) – «Կատարե՛ք ձեր տնային աշխատանքը»:
e. *Օրհնական բառակապակցություն* (BVP) – «Կեցցե՛ թագավորը», «Առողջություն»:
f. *Անձնական զգայական ընկալում (վկայաբերական կառույցներում)* (EVP) – «Տեսա, *արեւն է ծագում»:*

2. *Գոյականական բառակապակցություն* (NP), *որը կարող է խոսքում հանդես գալ որպես.*
   a. *Անվանական բառակապակցություն* (NPP) – «Աստաֆյան փողոց», «Ստրիպտիզ ակումբ», «Կոկա-Կոլա», *ևն:*
   b. *Դիմողական բառակապակցություն* (ANP) – «Տիկնայք եւ պարոնայք», «Հարգելի գործընկերներ», «Պարոն», «Տիկին»:
   c. *Ենթակայական բառակապակցություն* (SNP) – «Տեսական լեզվաբանությունն *ուսումնասիրում է բնական լեզվի բարբառները»:*
   d. *Խնդրային բառակապակցություն* (ONP) – *«Բնական լեզուները ուսումնասիրվում են* տեսական լեզվաբանության կողմից»
3. *Որոշչային բառակապակցություն* (ATP) – «Շատ մուգ կարմիր *վարդ»*, «Կարեվոր *նվաճում»*
4. *Եղանակավորող բառակապակցություն* (MP) – «Անկեղծ ասած, *սա ամենակարեվոր նվաճումն է»*, «Ոչ մի դեպքում, *դա մի՛ արեք»*
5. *Մակբայական բառակապակցություն* (AVP) – *«Շատ մուգ կարմիր վարդ»*
6. *Պատասխանական իմաստույթ (դերնախադասություն)* (AWP) – *«Այո», «Իհարկե», «Ոչ մի դեպքում»*
7. *Շաղկապող իմաստույթ* (CONN)
   a. *Շաղկապ* (CONJ) – «Եթե *արեւը դուրս գա,* ապա *մենք կգնանք լողափ», «1-ը* եւ *7-ը 8 է»*
   b. *Հարաբերող շաղկապ* (CONR) - *«Ես ապրում էի այնտեղ,* որտեղ *արծիվներն էին բուն դնում» [էջ 159]*
8. *Նմանակային (օնոմատոմատիկ) կամ բնաձայնային իմաստույթներ (*IML*)՝*
   a. *Բնական եւ մեքենական* (NAT) – *գոռ (մեքենա), տիկ-տակ, թիկ-թակ (ժամացույց), 22 (գետ)*
      i. *Ձայնարկություն [կենդանու]* (ANML) – *կոկո (ագռավ), մու (կով), հաֆ (շուն), կըկու (կկու)*
         1) *Ձայնարկություն [մարդու]* (INTJ) – «Հեյ, *ի՞նչ ես անում», «Վա՛յ, էս ինչ արեցի»*
9. *Խոսակցային կապակցություններ* (CUE) - «Տես, *ես քեզ կարող եմ միայն 7 կիլոդրամ պարտքով տալ»*
10. *Խոսակցային դադարներ, մակաբույծ բառեր* (FIL) - *«է-է ..», «ը-մ...», «ա-ա..».*

Խոսքի միավորներով՝ ենթակա, ստորոգյալ, ստորոգելի, եւ խնդիր պաշտոններին համապատասխան կառույցներով, եւ գործիքային իմաստույթներով ձեւավորվում է խոսքի խոսակցական-տրամաբանական հյուսվածքը:Խոսքի միավորները կազմված են իմաստույթներից, որոնց քերականական տեսակները լեզվի մասերն են:

Շարահյուսության ամփոփում

«Բնական խոսքը ստորադասական լեզվական կառույց է, որը ծավալվում է վարից վեր՝ 1) ձեւույթները միավորվում են իմաստույթների ձեւաբանական կանոնների համաձայն, ապա 2) իմաստույթները միավորվում են բառակապակցությունների շարահյուսական կանոնների համաձայն, եւ վերջապես 3) իմաստույթներն ու բառակապակցությունները խոսք են կազմում կապակցող իմաստույթներով, որոնք ապահովում են տրամաբանական հաջորդականությունը» [Hay2025] *(նաեւ [էջջ 141-158])։*

Նախադասության կառուցվածքը, որը վերջավոր բայ պարունակող նախադասություն է, նույնպես կարելի է բաժանել երեք շերտի՝ 1) վերեւում գտնվող բայ, ապա 2) ենթակա եւ խնդիր, եւ վերջապես 3) բայի եւ ենթակայի ու առարկայի մակբայական եւ ածականական լրացումներ [էջջ 149-158]։

Նախադասության անդամներն են՝ ենթական, ստորոգյալն ու ստորոգելին (ստորոգելին կարելի է ստորոգյալի բաղադրիչ համարել), որոշիչները (որոշիչների որոշիչները ներառյալ) եւ խնդիրները (լրացումները)» [էջ 208]։ Սա է պատճառը, որ դրանք կոչվում են խnufի *(նախադաության) մասեր։*

Բայական բնութագիրը բնորոշում է նախադասության կառուցվածքը [էջ 165]։

Ձեւաբանություն

Տեսություն

Ձեւաբանությունը (իմաստույթների կառուցման քերականությունը) նկարագրվում է BNF-*ով [էջ 336]։ Անվանական [էջջ 58-71], բայական [էջջ 72-92], եւ չթեքվող [էջջ 93-99] իմաստույթների կառուցվածքը նկարագրվում է որպես կարգավորված (տիպավորված) հիմքերի, ածանցների, եւ [ազատ] մասնիկների համակցություն։ Ճշտվում են ա) հիմքերի տեսակները որպես խոսքի մասերի գլխավոր կազմիչ անդամներ [էջ 276] եւ բ) ածանցների դիրքերը տեքստային ձեւերում [էջ 277]։*

Բայահիմքերը կառուցվում են 4 տեսակի հիմքերից 5 կաղապարներով, եթե բացառենք հրամայական եղանակը։ Հրամայական եղանակի ձեւերը կառուցվում են 8 կաղապարներով եւ, այդպիսով, շատ ավելի անկանոն են [էջջ 80-82]։

Ձեւաբանության քննությունը հանգում է ա) հիմքատման [էջջ 129--136], բ) պիտակավորման [էջջ 136-138], գ) լեմմավորման [էջջ 139-140] ալգորիթմներին, եւ դ) թեքված բառաձեւերի սինթեզման [էջջ 124-127] ալգորիթմներին, որոնք ծրագրային իրագործման հիմքն են։ Բայց դրանց ավելի կարեւոր նպատակը ձեւաբանական մոդելի մանրամասների բացահայտումն է։ Առաջին երեքը գործածվում են ծառադարանների տեքստերի պիտակավորման համար, իսկ վերջինը՝ ցանկացած հիմքից բոլոր հնարավոր կամ հատկանշված տեքստային ձեւերի կառուցման համար։

Համադրական լեզուների ձեւաբանությունը քերականական օրենքների այն բազմությունն է, որով ձեւույթներից կառուցվում են իմաստույթներ։ Իմաստույթ եզրույթի սահմանումը տրված է 342 էջում, սակայն այն հաջող չէ։ Ավելի հաջող (եւ կարճ) է հետեւյալ սահմանումը [Hay2025]՝ *«քերականական կանոնների՝ ձեւաբանության, համաձայն կառուցված ձեւույթների համակցություն, որին կարելի է [գոյաբանական, տրամաբանական] իմաստ եւ շարահյուսական դեր վերագրել՝ ենթակա, ստորոգյալ, խնդիր, ևն։ Ավանդաբար՝ բառ։ Իմաստույթի եւ բառակապակցության միջեւ սահմանը հստակ չէ, օրինակ՝ շաղկապների եւ թվականների դեպքում»։*

Իմաստույթի կառուցվածքը

*Իմաստույթը բառաձեւի ընդհանրացումն է։ Բառախմբերով արտահայտված իմաստույթները հայերենում սակավ չեն, սակայն դրանք հիմնականում բառեր են։ Բառախմբերի օրինակներ են շաղկապները (*միայն թե, եթե … ապա, *ևն), բայաձեւերը (*գնում է, վազելիս է լինում, չեմ շտապում, *ևն), թվականները (*տասնմեկ միլիոն երեք հազար*)։ Ավելի քիչ են բառախմբերով ներկայացված մակբայները (*չորս անգամ/հատ (?), արագ-արագ, ուշ-ուշի, *ևն), դերանունները (*ամեն ոք, մի քանիսը, *ևն), եւ գոյականները հարադրական հոլովաձեւերը [էջջ 175-176]՝* տուփի մեջ *(ներգոյական),* սեղանի տակ *(ստորկայական),* հագուստի տակից *(ստորհեռական)։*

Գրքի ձեւաբանական հատվածներում հիմնական ուշադրությունը բեւեռված է բառաձեւերի, այլ ոչ թե իմաստույթների կառուցման վրա։ Բառաձեւերը դասակարգված են ավանդական քերականական կարգերի եւ հարացուցային ձեւերի։ Այդ ձեւերը կազմված են նախածանցներից, հիմքերից, միջածանցներից, եւ վերջածանցներից, որոնք բառաձեւերում ոչ պատահական հաջորդականությամբ են հանդիպում։

112-113 էջերում կատարված «վերլուծությունից երեւում է, որ եթե ընդունենք զուտ քերականական դասակարգումը՝ բառակերտական վերջածանցներ, բայակերտական միջածանցներ, խոնարհման եւ հոլովման վերջածանցներ, հոդեր, ապա հատվածի սկզբում դրված խնդիրը [էջ 112] չի լուծվի։ Այդ խմբերը հնարավոր չի լինի կարգավորել այնպես, որ ցանկացած բառաձեւում վերջածանցների կարգերը ձախից աջ աճեն։

Խնդրի լուծման համար «Բառաձեւերի բաղադրիչների շարակարգը» Դ6 *աղյուսակում բառակազմական ձեւույթների մի դասակարգում է առաջարկվում, որի համաձայն բառաձեւ «շարելու» համար հարկավոր է 19 ճեղք[վածք]* (slot) *բառակազմական ձեւույթները տեղադրելու համար 4-ը՝ նախածանցների, 1-ը՝ պարզ հիմքի եւ 14-ը՝ վերջածանցների համար"։*

Նախածանցային դիրքերի ձեւույթները թվարկված են Ա2.2 *աղյուսակում։ Հինգերորդ դիրքում տեղադրվող պարզ հիմքերը 17 տեսակի են՝* Աղյուսակ Դ5։ *Վերջածանցները բաժանված են գոյականակերտ, ածականակերտ, թվականակերտ, մակբայակերտ, եւ բայական խմբերի՝* Ա2.3 – 2.7։ *Գոյականական վերջածանցների հետ կապված նշենք երկու* Դիտարկում՝ *#4 (ե-վոր ածանցի ուղղագրությունը) եւ #10 (եւ վերջածանցի ա-*

ռանձնացումը)։ Վերջին Դիտարկումը *լուսաբանման կարիք ունի՝ ծագում [Գար1963], գործածում, նշանակություն. այն կավարտվի երրորդ հրատարակությունից առաջ։*

Հիմք ընդունելով շարահյուսական պաշտոնները [էջ 165], իմաստույթները ըստ բնույթի կարելի է բաժանել հետեւյալ մեծ խմբերի՝ անվանական (գոյական, ածական, դերանուն), հատկանշական (ածական, մակբայ), բայական (դերբայական), խոսակցային (հարցական, պատասխանական՝ CONV*), շաղկապային (շաղկապ, հարաբերական բառեր՝* CONN*), (բնաձայնային, եղանականիշ՝* IMIT*), եւ գործիքային.*



Գծագիր Ա - *Լեզվի մասերը (ավանդաբար խոսքի մասեր են անվանվում)*

Սլաքները Ա *գծագրում ցույց են տալիս ժառանգման հարաբերությունը [էջ 172] եւ ուղղվածությունը՝ սլաքը ուղղված է մասնավորից դեպի ընդհանրական։ Ընդհատակյա գծերով կազմված ուղղանկյունները խմբավորում են նույնատիպ ձեւերը։ Օրինակ՝ մակբայական ձեւերը ընդգրկում են մակբայը* (ADV), *տրական հոլովաձեւը* (NOUN.D), *ներգոյական հոլովաձեւը* (NOUN.L), *ևն։ Այսպիսի խմբավորումը զուտ էսթետիկ (գեղագիտական) է՝ գծագրի լայնությունը եւ սլաքների խտությունը փոքրացնելու համար։ Տրամաբանորեն խմբերի ամեն մի անդամից սլաք պետք է գնա դեպի ավելի ընդհանրական հասկացությունը, ինչպես որ ամբողջ խմբից է գնում։ Գոյականական* (NOUN) *ձեւերում նշված վերացական* (ABS) *եւ թանձրական, նյութական* (SUBS) *ձեւերը նույնպես վերացական կարգեր են, որոնք կարելի մնացած տեսակների անվանում համարել։ Պիտակները տես՝ [էջջ 228-230, 244-245, 275-276, 283, 295-301, 308-309, 311, 313]։*

*Գոյականի հարացուցային ձեւերը կարող են ածականական (*տան [դուռը]*) կամ մակբայական (*դանակով [մաfրել]*) լինել [էջջ 147, 171-175]։ Դերբայական ձեւերը կարող են ածականական (*խորոված [կարտոֆիլ], ուսանող [մարդ], ցանկալի [ավարտ], ուղարկելիք [ծանրոց]*) լինել եւ գոյականաբար գործածվել [էջջ 85, 147, 149] կամ գոյական (գործողության անվանում՝* տոնել, մատակարարել*) [էջ 83] լինել։*

Ձեւույթների տեսակները

Իմաստույթները կառուցվում են ձեւույթների համա- կամ հարադրումով. տե՛ս վերլուծությունը [էջջ 43-100, 175-176], ամփոփումը Դ5, Դ6, *եւ* Ե4.1 *աղյուսակները [էջջ 276-278, 295-298]։ Ստորեւ բերված են ձեւույթների ժառանգման ծառերը, որոնցում գործածված են* Ա *գծագրի հանձնառումները՝*



Գծագիր Բ - *Ձեւույթների դասերը*

Ձեւաբանության ամփոփում

Քերականության ձեւաբանական հատվածի նպատակն է կարգավորված ձեւույթներից Գծագիր Բ *վերեւում եւ* Հավելված Ա *գրքում) իմաստույթներ կառուցել։ Իմաստույթները մեր մտքում ձեւավորված իրական եւ վերացական հասկացություններ- ի եւ հոգեկան վիճակների նշաններ են։ Այդ նշանները կարգավորվում են, որպես լեզ- վի մասեր (*Գծագիր Ա*), որոնք ավանդաբար կոչվում են խոսքի մասեր։*

Խոսքը լեզվի մասերից՝ բայ, գոյական, ածական, ևն, բաղկացած ենթակայական, ստորոգելիական, խնդրային կառույցների (բառակապակցությունների), եւ գործիքա- յին իմաստույթների հարադրություն է։

Բերված դասակարգումները կորպուսներով վերահաստատման կարիք ունեն։

Մոդելը

Առաջարկվող մոդելը քերականական՝ հասկանալի, խոսք սերելու եւ վերլուծելու մոդել է։ Այն չի հավակնում խոսքի իմաստը որոշելու կամ նշանակությունը հաշվարկելու։

Մոտեցման հիմքում ընկած է այն հանգամանքը, որ խոսքն ունի խորքային ծառատիպ կառուցվածք, չնայած արտահայտության գծայնությանը։ Մոդելավորվում է այդ ծառատիպ կառուցվածքը, որն անվանվում է ԲԾ [էջջ 35-42]։ Այն կառուցվում է նախադասության վերլուծության (parsing) հետեւանքով։

Սակայն, լեզվական մոդելը պետք է նաեւ սերող (generative) լինի։ Բայց խոսքի սերումը մոդելի մուտքի, այսինքն՝ ԲԾ-ի աղբյուրի, խնդիր ունի։

«Եթե բառաձեւերի սերման նպատակը բառի թեքված ձեւի կառուցումն է հիմքից (լեմմայից), ապա նախադասության դեպքում պարզ չէ, թե ի՞նչ ենք տալու սերող համակարգի մուտքին, այլ կերպ ասած՝ ինչպե՞ս ենք սահմանելու նախադասության բովանդակությունը։ Մինչ օրս, բացի մարդկային ուղեղից, հայտնի չէ մեկ այլ սարք, որ արտաքին աշխարհի պատկերը բնական լեզվով նկարագրի կամ մտքեր սերի եւ դրանք խոսքի վերածի (իրավիճակը արագորեն փոխվում էջ ԱԲ համակարգերը կարող են պատկերներ անվանել, կարգավորել)։ Հայտնի չէ մի որեւէ ոչ խոսքային կառույց, որը նախադասության իմաստ սահմանի։ Նախադասությունը կարելի սահմանել կամ նկարագրել միայն այլ նախադասությունով (նախադասություններով)։ Դա կարող է լինել նույն կամ այլ լեզվի նախադասություն, որը կտրվի ձայնույթների, գրույթների, շարժույթների կամ գծագրերի միջոցով։ Ի վերջո այն անպայման կվերլուծվի որպես որեւէ բնական լեզվի օրենքներով միմյանց հետ համաձայնեցված նախադասության անդամներ։ Եւ դա բնական ու հասկանալի է. մենք հաղորդակցվում ենք նախադասություններով։ Որեւէ նախադասության մասին խոսելիս (այն նկարագրելիս, սահմանելիս) մենք օգտվում ենք նախադասություններից» [էջ 41]։

Գրքում առավելություն չի տրվում խոսքի որեւէ հատուկ ձեւական ներկայացմանը։ Առավել մոտիկ կարելի է համարել բառակապակցությունների կառուցվածքի (phrase structure) ծառերը։

Գրքում մոդել եւ կաղապար եզրույթները համարժեքորեն եւ փոխարինաբար են գործածվում։ Սակայն ավելի հետեւողական է գործածել մոդել բառը, երբ խոսքը գնում է ամբողջ լեզվի մոդելի մասին, իսկ կաղապարը օգտագործել օրինաչափություն (pattern) իմաստով, երբ խոսք է գնում իմաստույթների կամ բառակապակցությունների կառուցվածքի մասին։

Մոդելները հիմնականում երկու տեսակի են լինում՝ դետերմինիստական եւ վիճակագրական։ Գրքում նկարագրված մոդելը դետերմինիստական է՝ այսինքն այն սահմանում է լեզվի նվազագույն (տարրական, ատոմային) միավորների՝ ձեւույթների, հաջորդ մակարդակի՝ իմաստույթների եւ բառակապակցությունների կարգերը, ինչպես նաեւ քերականական օրենքները, որոնցով պայմանավորվում է խոսքի սերումն ու վերլուծումը։ Քերականական օրենքները նկարագրվում են BNF-ով, որ կոնտեքստից ան-

կախ (context free) քերականության [էջ 346][2] նկարագրություն է։ Բայց բնութագրի ներմուծումը փաստորեն դարձնում է քերականությունը կոնտեքստից կախյալ։

Մեքենայի Ուսանման վիճակագրական մոդելներից մեկը նյունպես նկարագրված է գրքում [էջջ 314-332]։ Բայց հեղինակը առաջարկում է, որ ԱԲ-ն օգտագործի ԲԾ-ն որպես նաեւ տեսային «ընկալման» ֆորմատ [էջջ 331-332]։

Առաջակրված մոդելը վերափոխում է բնական խոսքը սկզբից Նախադասության Ծառի (ՆԾ), իսկ հետո կառուցում է ԲԾ-ն։

«Ամենաընդհանուր դեպքում համադրական լեզուների համար համակարգի կազմում կլինեն.

1. Տվյալների շտեմարաններ.
   a. Պարզ հիմքերի բառարան.
   b. Անփոփոխ ձեւերի (եւ մասնիկների) բառարան.
   c. Բառակազմական ածանցների բառարան.
   d. Հարացուցային ածանցների բառարան.
   e. Պիտակների համատեղելիության եւ սահմանափակումների աղյուսակ.
   f. Բառարանային ձեւերի գանձարան.
   g. Հարացուցային կառույցների (իմաստույթների բնութագրերի) ցանկ.
   h. Բայական բնութագրերի ցանկ.
   i. Անվանումների (եւ անվանական հիմքերի) բառարան։
2. Ալգորիթմներ.
   a. Սերող՝ տեքստային բառաձեւեր կառուցող.
   b. Հիմքատող՝ բառաձեւի բաղադրիչները որոշող.
   c. Պիտակավորող՝ խոսքիմասային պատկանելությունը եւ թեքույթը որոշող.
   d. Լեմմավորող՝ բառաձեւի ուղիղ (բառարանային) ձեւը վերականգնող.
   e. Վերլուծող՝ ՆԾ կառուցող.
   f. Միասնական հարացույցի ձեւերով ներկայացնող՝ ԲԾ կառուցող.
   g. ԲԾ-ն տվյալ լեզվի ընդհանրական հարացույցի ձեւերով ներկայացնող՝ ԲԾ-ՆԾ փոխակերպող.
   h. Մասնավոր լեզվի նախադասություն սերող (բովանդակությունն արտահայտող)՝ ՆԾ գծայնացնող։» [էջ 212]

Նյութի արտապատկերումը՝ գրքի ֆորմատը

Գրքի ֆորմատավորմանը հատուկ ուշադրություն է դարձվել հաշվի առնելով, որ այն ա) գիտական աշխատություն է, որը պարունակում է բ) մեծ քանակով տեղեկույթ (տվյալներ)՝ այսինքն նաեւ տեղեկատվական հատվածներ։

[2] Գրքում գործածված *կոնտեքստազերծ* եզրույթը անհաջող է:

Բոլոր բանաձեւերին տրված են յուրահատուկ պիտակներ՝ տառ+թիվ կամ ուղղակի թիվ, արտաքին եւ ներքին հղումների հարմարության համար։ Նույն պատճառով հավելվածների աղյուսակների տողերն են համարակալված։

Եզրույթներ հատվածում սահմանվում եւ բացատրվում են լեզվաբանական, դիսկրետ մաթեմատիկան, համակարգչային եզրույթներ։ Մեծամասնության համար տրվում է ծագման լեզուն եւ անգլերեն ու ռուսերեն թարգմանությունները։ Այդ հատվածի նպատակը եւ ա) գիտական *եւ բ)* տեղեկատվական*։*

Աշխատության բովանդակության մեջ ուղեվորվելու հարմարության համար, Բովանդակության *հետ մեկտեղ,* Ցուցիչ *է կազմված, որն ինչ-որ չափով կարելի է կարեվոր եզրույթների ցանկ համարել։ Այն բաղկացած է երկու ենթացանկերից՝ ա) հղումների եւ բ) հասկացությունների։ Այս ցանկերը կառուցվել են* ArmParser *համակարգի լեմմավորման ֆունկցիայի օգնությամբ։*

Յուրահատկությունների ամփոփում

Ստորեւ թվարկված աշխատության յուրահատկությունները հեղինակային են այնքանով, որ հեղինակն է հորինել։ Սա չի նշանակում, որ ուրիշները նման գաղափարների կամ եզրակացությունների չեն եկել։ Սա միայն նշանակում է, որ հեղինակը դրանց մասին չգիտի։ Սրանք, վերատուգումից հետո, դիսերտացիայի գիտական «նոր արդյունքներ» կամ գիտական «յուրահատկության» ցանկում կարող են ընդգրկվել։ Բայց դրանք ոչ այդքան նորություններ են, ինչքան ամփոփումներ նոր տեսանկյունից (ստորեւ հիմնականում Բովանդակության *ցանկից տողեր են՝ թվերը ձախից հատվածների համարներն են, իսկ աջից՝ էջերը)՝*

1 Հարաբերությունների վերլուծություն՝

a. 2.2.1 Գոյաբանական հարաբերություններ 23

b. 2.2.2 Տարածական հարաբերություններ 23 (*Հր.2 նշել աղբյուրները, էջ 24՝* [*Ջահ1974։435*], [Pan2011])

c. 2.2.3 Ժամանակային հարաբերություններ 24

2. 3.3 Քերականական օրենքների տեսակները 37

3. 7.5 Բնաձայնային բառեր 97

4. *5 – 8 հատվածների վերլուծության հիման վրա հետեւյալ ցանկերն են կառուցվել՝* 55 - 100

a. 18.1.5 Աղյուսակ Ա1.5 Ձեւույթների տեսակները 231 (*ամփոփումը տես վերեւը նույնանուն հատվածում.* Գծագիր Բ - *Ձեւույթների դասերը*)

b. 18.2.3 Աղյուսակ Ա2.3 Գոյականակերտ 233 (*Դիտարկում #10,* -եւ *ածանցը*)

c. 20.6.7 Աղյուսակ Գ10.7 Դերբայական եւ բայական հիմքերի ձեւավորումը 267

d. 21.5 Աղյուսակ Դ5 Պարզ հիմքեր 276 (*ամփոփումը տես վերեւում, Ձեւույթների տեսակները հատվածում.* Գծագիր Բ - *Ձեւույթների դասերը*)

e. 21.6 Աղյուսակ Դ6 Բառաձեւերի բաղադրիչների շարակարգը 277

f. 22.2.3 Աղյուսակ Ե1.3 Դիրք, ուղղություն եւ ուղղվածություն 282 (*սա փաստորեն տեսականորեն հնարավոր դիրքաուղղվածական «հոլովների» ցանկն է*)

g. 22.3 Հայերենի այլընտրական հոլովները 283 (*վերլուծությունը*՝ 12.7)

h. 22.3.1 Աղյուսակ Ե2.1 Համադրական հոլովներ 283 (*վերլուծությունը*՝ 12.8)

5. 5. 22.4 Բայական բառակապակցության բնութագրեր 283 *(բնութագրի օգնությամբ վերլուծված եւ կառուցված ցանկերը. տես նաեւ* [Hay2025]*)*՝

a. 22.4.1 Աղյուսակ Ե3.1 Ստորոգելիական խնդրով բնութագրեր 284

b. 22.4.2 Աղյուսակ Ե3.2 Երկարժույթ բայերով բառակապակցություններ 285

c. 22.4.3 Աղյուսակ Ե3.3 Եռարժույթ բայերով բառակապակցություններ 286

6. *Միասնական հոլովում*

a. 22.5.1 Հոլովների նկարագրությունը 288

b. 22.5.2 Աղյուսակ Ե4.1 Միասնական հոլովաձեւերի արտապատկերում 295

c. 22.6 Հոմանիշ կամ վիճելի հոլովներ 295

7. *Միասնական խոնարհում*

a. 2.8.1 Եղանակների դասակարգումը 303 (*անավարտ, թերի*)

b. 22.9 Կերպ 309

c. 22.10 Բայական սեռ 311

8. 24 Եզրույթներ 333 (*անհաջողներից մի քանիսը այստեղ հիշատակվել են*)

9. *Եթե Անվանական եւ Սեռական հոլովները համարենք որոշչային* (predicative, attributive) *ձեւեր եւ հոլովաձեւ չհամարենք, ապա Համընդհանուր հոլովական համակարգը կունենա 5 տեսակի հոլով, որոնցից 5-երորդը կունենա 66 հոլով։ Այսինքն, կարելի է 70 հոլով «հնարել» [էջջ 208-209]։ Տե՛ս 1.*b, *4.*a, *եւ 4.*d*։*

10. *Իմաստի ձեւավորման 5 կոնտեքստների բաժանումը [էջ 200]։*

11. *Գերանիշի բացակայությունը [էջ 205] որպես թարգմանության ամենադժվար խնդիր դասակարգումը։*

Յուրահատկություն կարելի համարել նաեւ հաշվողական գիտությունների (computer science) *մեթոդների եւ հասկացությունների կիրառումը քերականության նկարագրմանը*՝ BNF, *ԱԿՍ (առավելագույն կլանման սկզբունքը), բայական բնութագիր, ևն։*

Հետագա հետազոտությունները

*Ավտորեֆերատում (*Հետագա ուսումնասիրությունները *հատվածը) թվարկված թեմաներին պետք է ավելացնել խոսակցային միավորների կարգավորման (կատեգորիաների) եւ համապատասխանաբար պիտակավորման հարցերը, որոնք մասամբ շոշափվել են* Hay2025*-ում եւ այստեղ (տես* Խոսքի մասերը *հատվածը եւ Բ. Հավելվածը*՝ Խոսակցային միավորների պիտակները*)։*

Ավտորեֆերատի Հետագա ուսումնասիրությունները *հատվածում բերված #2 կետի լուծման ուղղությամբ այստեղ որոշ քայլեր են ձեռնարկվել՝ տես* Ձեւաբանություն *հատ-*

վածը վերեւում։ Այդ հատվածը ճշգրտման կարիք ունի կորպուսային ուսումնասիրություններ հիման վրա։

Ինչ-որ չափով Hay2025*-ում քննարկված խնդիրները կարելի է կապել #14 կետի հեռ։ Այդ ուղղությամբ մի նոր ուսումնասիրություն՝* **խոսակցության տրամաբանությունը** (Logic of the Discourse) *պայմանական անունով կհրապարակվի մինչեւ տարվա վերջը։*

Հավելված

Ա. Հավելյալ գրականություն

- [Deu1997] D.Deutsch. The fabric of reality. Allen Lane. 1997.
- [Deu2011] D.Deutsch. The beginning of Infinity. Penguin Books. 2011.
- [Hay2025] A. Hayrapetyan. Conjunctions in Eastern Armenian, academia.edu/129638433, 2025
- **[Գար1963]** *Գ.Լ.Գարեգինյան, Շաղկապները ժամանակակից հայերենում, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատարակություն, Երեւան, 1963։*

Բ. Խոսակցային միավորների պիտակները

Աղյուսակ Ե9 Խոսքային միավորների պիտակներ

V.*1.1*	պիտակ	անուն	անգլերեն
1	ANML	*կենդանաձայնային իմաստույթ*	animal imitative
2	ANP	*դիմողական բառակապակցություն*	address
3	AP	*որոշչային բառակապակցություն*	attributive phrase
4	AVP	*մակբայական բառակապակցություն*	adverbial phrase
5	AWL	*պատասխանական իմաստույթ*	answer lexeme
6	BVP	*օրհնական բառակապակցություն*	benedictive VP
7	CONJ	*շաղկապ*	conjunction
8	CONN	*շաղկապող իմաստույթ*	connective lexeme
9	CONR	*վերաբերական իմաստույթ*	relational connective
10	CUE	*խոսակցային կապակցություններ*	cue words
11	DVP	*սահմանական բառակապակցություն*	declarative VP
12	EVP	*վկայաբերական բառակապակցություն*	evidential VP
13	FIL	*մակաբույծ բառեր*	fillers
14	IML	*նմանակային իմաստույթ*	imitative lexeme
15	IMPP	*հրամայական բառակապակցություն*	imperative VP
16	INTJ	*բացականչական իմաստույթ*	interjection
17	IVP	*հարցական բառակապակցություն*	interrogative VP
18	MP	*եղանակավորող բառակապակցություն*	modal phrase
19	MVP	*զարմացական բառակապակցություն*	mirative VP
20	NAT	*բնաձայնային իմաստույթ*	natural sound
21	NP	*գոյական բառակապակցություն*	noun phrase
22	NPP	*գոյականական բառակապակցություն*	nominal NP
23	ONP	*խնդրային բառակապակցություն*	object NP
24	PVP	*դատողական բառակապակցություն*	propositional VP
25	SNP	*ենթակայական բառակապակցություն*	subject NP
26	VP	*բայական բառակապակցություն*	verb phrase

Վերանայումների պատմություն

Name	Date	Reason for Changes	Version
Արամ Հայրապետյան	08/30/25	*Նախնական տարբերակ*	0.1
Արամ Հայրապետյան	09/03/25	*Վրիպակների, անճշտությունների, ոճի ուղղում. ավելացրի՝* CUE, FIL, Deutsch-*ի հղումները*	0.2